**«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ԲԷՑ-ԳՀԾՁԲ-20/58**

ք. Երևան «12» հունվարի 2021թ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Հայկ Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մ-Բի-Ռ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Վարդան Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված Ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը կազմում է 7 800 000 (յոթ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հաստատման օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում:

Ծառայությունների դեպքում, մատուցված Ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն Պայմանագրով սահմանված առանձին տեսակի Ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն Ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված Ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված Ծառայության քանակն է:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Ծառայությունը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով և սույն Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը,

պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած` հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում և (կամ) այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը` Կատարողի առաջարկության առկայության դեպքում` պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները` ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող

պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն Պայմանագիրը կազմված է 64 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459
Գլխավոր տնօրեն

--------------------- Հ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա - Կրեդիտ - Ագրիկոլ - բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829

--------------------- Վ. Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
« 12 » 01 2021 թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-20/58» ծածկագրով Պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

## Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | Մասնակցի առաջարկած միավոր գների հանրագումար /ՀՀ դրամ | Ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 50111170/2 | 5 տեղանոց ավտոմեքենաներ՝ Գազ – 3102, Գազ – 31105-101, | Ներկայացված է հավելված 1.1- ով | դրամ | 5000000 | 1 | ք. Երևան | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 365 օրացուցային օր: |
| 3 | 50111170/4 | 4x4 տիպի ավտոմեքենաներ՝ Շևրոլետ Կապտիվա, Տոյոտա Պրադո, Ֆոլկսվագեն Տուարեգ | Ներկայացված է հավելված 1.1- ով | դրամ | 15000000 | 1 | ք. Երևան | |
| 4 | 50111170/5 | 5-ից 17 տեղանոց մարդատար ավտոմեքենաներ՝ Շկոդա Օկտավիա, Տոյոտա Քեմրի-2,5, Մերսեդես Բենց, Ֆորդ Տրանզիտ, Հյունդաի ակցենտ | Ներկայացված է հավելված 1.1- ով | դրամ | 15000000 | 1 | ք. Երևան | |

*Տեխնիկական սպասարկման կայանը պետք է ունենա վերանորոգման համար անհրաժեշտ բոլոր արտադրամասերը (ընթացամասի, էլեկտրականության, յուղման, անվաբացքի կարգավորման, վուլկանացման, ինժեկտորի վերանորոգման, ղեկային մասի, փոխանցման տուփի և կամրջակների վերանորոգման, ինչպես նաև մեքենայի ախտորոշման և այլ անհրաժեշտ սարքավորումներ և ծառայություններ) և կարողանա միաժամանակ սպասարկել առնվազն թվով 5 (հինգ) ավտոմեքենա, ունենա առնվազն 3 (երեք) հատ ամբարձիչ:

*ՏՍ կայանի տեխնիկական անձնակազմը պետք է համալրված լինեն ավտոմեքենայի արատորոշման տեխ.սպասարկման և նորոգման աշխատանքների կատարման համար մասնագիտացված աշխատակիցներով այդ թվում շարժիչագործով, ավտոփականագործով, ավտոէլեկտրիկով, անիվների մոնտաժման և անվաբացքի կարգավորման առանձնացված մասնագետներով:

*Ավտոմեքենայի վերանորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքների ժամանակ պետք է օգտագործվի միայն գործարանային արտադրության նոր պահեստամասեր:

*Ավտոմեքենայի անսարքության ժամանակ նրա ինքնագնաց տեղափոխման անհնարինության դեպքում, նրա տեղափոխումը իրականացվում է կատարողի ուժերով՝ մինչև 30կմ. անվճար, 30կմ. գերազանցող հատվածի մասով՝ ըստ հավելվածի նշված գնի: Ընդ որում, Երևանի վարչական տարածքում տեղափոխումը իրականացվում է անսարքության մասին ծանուցումը /գրավոր կամ բանավոր/ ստանալուց հետո 2 (երկու) ժամվա ընթացքում, իսկ հանրապետության մարզերում՝ ծանուցումը /գրավոր կամ բանավոր/ ստանալուց հետո 7 (յոթ) ժամվա ընթացքում:

*Պատվիրատուի կողմից ներկայացված /գրավոր կամ բանավոր/ հայտերի՝ ավտոմեքենան տեխնիկական սպասարկման կայան ժամանելուց հետո Կատարողը պետք է ապահովի ավտոմեքենայի արտաիերթ զննումը՝ ժամանելու պահից առավելագույնը 30 (երեսուն) րոպեի ընթացքում, ընդ որում աշխատանքների կատարման ավարտի համար նախատեսված առավելագույն ժամկետը չի կարող ավել լինել՝ չափաբաժինների ընթացիկ նորոգման աշխատանքների համար 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ շարժիչի, փոխանցման տուփի, ավտոմատ փոխանցման տուփի և բաշխիչ տուփի հիմնական նորոգման աշխատանքների համար՝ 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում:

*Բոլոր չափաբաժինների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում ծառայությունը ընդունելու օրվանից հաշված՝ ընթացիկ նորոգման աշխատանքների համար մինչև 6 (վեց) ամիս, իսկ շարժիչի, փոխանցման տուփի, ավտոմատ փոխանցման տուփի և բաշխիչ տուփի հիմնական նորոգման աշխատանքների համար՝ 1 /մեկ/ տարի ժամկետով կամ կատարած լինի 30000 կիլոմետր վազք:

* Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկումը պետք է իրականացվի Երևան քաղաքում գտնվող մեքենաների համար Երևան քաղաքում, իսկ մարզերում ըստ մասնաճյուղերի տեղաբաշխման հասցեների (ըստ հավելված 1-ում նշված հասցեների)

*Ծառայության մատուցման ընթացքում հավելվածում բացակայող ավտոպահեստամասերի և աշխատանքների անհրաժեշտության դեպքում կկնքվի համապատասխան համաձայնագիր, հաշվի առնելով տվյալ պահի շուկայական արժեքը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե` ք. Երևան, Զ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459
Գլխավոր տնօրեն

------------------------ Հ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա - Կրեդիտ - Ագրիկոլ - բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829

------------------------ Վ. Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
« 12 » 01 2021 թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-20/58» ծածկագրով Պայմանագրի

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | 5 տեղանոց մարդատար ավտոմեքենաներ Գազ 31105-101, Գազ-3102 | 4X4 տիպի ավտոմեքենաներ, Շևրոլետ Կապտիվա, Տոյոտա Պրադո, Ֆոլկսվագեն Տուարեգ | 5-ից 17 տեղանոց մարդատար ավտոմեքենաներ Շկոդա Օկտավա, Տոյոտա Քեմրի-2,5, Մերսեդես Բենց, Ֆորդ Տրանզիտ, Հյունդաի Ակցենտ |
| | | Առաջարկվող գինը միավորի համար | Առաջարկվող գինը միավորի համար | Առաջարկվող գինը միավորի համար |
| | | 2 ավտոմեքենա | 3 ավտոմեքենա | 6 ավտոմեքենա |
| | Տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքների անվանումը | ԱՊՀ արտադրության ավտոմեքենաների | Այլ պետությունների արտադրության ավտոմեքենաների | |
| | 1.Շարժիչ | | | |
| 1 | Շարժիչի հանում և տեղադրում 1 հատ | 35 000 | 80 000 | 80 000 |
| 2 | Շարժիչի քանդում արատավորում և հավաքում 1 հատ | 50 000 | 130 000 | 130 000 |
| 3 | Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները 1 հատ | 100 000 | 230 000 | 230 000 |
| 4 | Շարժիչի գլխիկի հանում տեղադրում՝ միջադիրի փոխարինումով 1 հատ | 30 000 | 60 000 | 60 000 |
| 5 | Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցումով և հղկումով 1 հատ | 50 000 | 80 000 | 80 000 |
| 6 | Շարժիչի գլխիկի փականների փոխարինում՝ հղկումով և խցուկի փոխարինումով 1 լրակ. | 30 000 | 90 000 | 90 000 |
| 7 | Վառոցքի մոմի բնիկի նորոգում 1 հատ | 8 000 | 8 000 | 8 000 |
| 8 | Շարժիչի փականների զսպանակների փոխարինում 1 լրակ. | 400 | 50 000 | 50 000 |
| 9 | Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 լրակ. | 25 000 | 60 000 | 60 000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 10 | Հիդրոձգանի փոխարինում<br>1 հատ | 8 000 | 20 000 | 20 000 |
| 11 | Շարժիչի մխոցաօղերի փոխարինում<br>1 լրակ. | 30 000 | 60 000 | 60 000 |
| 12 | Շարժիչի մխոցամատերի փոխարինում<br>1 լրակ. | 10 000 | 20 000 | 20 000 |
| 13 | Ծնկածն լիսեռի հղկում<br>1 հատ | 10 000 | 10 000 | 10 000 |
| 14 | Ծնկածն լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում<br>1հատ | 10 000 | 40 000 | 40 000 |
| 15 | Ծնկածն լիսեռի արմատական ներդրակների փոխարինում<br>1լրակ. | 10 000 | 30 000 | 30 000 |
| 16 | Ծնկածն լիսեռի շարժաթևային ներդրակների փոխարինում1 լրակ. | 2 000 | 20 000 | 20 000 |
| 17 | Ծնկածն լիսեռի ատամնանիվի փոխարինում 1 հատ | 15 000 | 25 000 | 25 000 |
| 18 | Ծնկածն լիսեռի ուղղում<br>1 հատ | 5 000 | 5 000 | 5 000 |
| 19 | Ծնկածն լիսեռի առջևի խցուկի փոխարինում 1 հատ | 5 000 | 20 000 | 20 000 |
| 20 | Ծնկածն լիսեռի հետևի խցուկի փոխարինում 1 հատ | 25 000 | 35 000 | 35 000 |
| 21 | Շարժիչի բլոկի փոխարինում<br>1 հատ | 50 000 | 8 000 | 8 000 |
| 22 | Շարժիչի գլանի փոխարինում<br>1 հատ | 7 000 | - | - |
| 23 | Մխոցի փոխարինում<br>1 հատ | 5 000 | 5 000 | 5 000 |
| 24 | Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում<br>1 հատ | 2 000 | 40 000 | 40 000 |
| 25 | Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում<br>1 հատ | 2 000 | 5 000 | 5 000 |
| 26 | Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում<br>1 հատ | 3 000 | 40 000 | 40 000 |
| 27 | Փոկանիվի փոխարինում<br>1 հատ | 8 000 | 10 000 | 10 000 |
| 28 | Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում 1 հատ | 10 000 | 20 000 | 20 000 |
| 29 | Շարժիչի շղթայի փոխարինում<br>1 հատ | 15 000 | 50 000 | 50 000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 30 | Շարժիչի վանոսների փոխարինում<br>1 լրակ. | - | 20 000 | 20 000 |
| 31 | Շարժիչի քարտերի նորոգում՝ եռակցումով 1 հատ | 5 000 | 10 000 | 10 000 |
| 32 | Շարժիչի քարտերի փոխարինում՝ միջադիրի փոխարինումով<br>1հատ | 4 000 | 18 000 | 18 000 |
| 33 | Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում 1 հատ | 3 000 | 20 000 | 10 000 |
| 34 | Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով 1 հատ | 5 000 | 15 000 | 17 000 |
| 35 | Շարժիչի յուղի մղիչի փոխարինում<br>1 հատ | 10 000 | 30 000 | 30 000 |
| 36 | Շարժիչի յուղի մղիչի նորոգում<br>1 հատ | 10 000 | 3 000 | 3 000 |
| 37 | Շարժիչի յուղի մղիչի մաքրում<br>1 հատ | 1 000 | 40 000 | 40 000 |
| 38 | Շարժիչի յուղի ռադիատորի փողրակի փոխարինում 1 հատ | 3 000 | 30 000 | 30 000 |
| 39 | Յուղի ծորակի փոխարինում<br>1 հատ | 5 000 | 20 000 | 15 000 |
| 40 | Օդաքաշակ փողրակի փոխարինում<br>1 հատ | 2 000 | 5 000 | 5 000 |
| 41 | Շարժիչի կոմպրեսորի փոխարինում<br>1 հատ | 2 000 | 15 000 | 15 000 |
| 42 | Շարժիչի բարձր ճնշման մղիչի փոխարինում 1 հատ | 3 000 | 35 000 | 35 000 |
| 43 | Շարժիչի բարձիկի հանում, տեղադրում կամ փոխարինում 1 հատ | 2 000 | 15 000 | 15 000 |
| 44 | Ուղղորդիչ վռանի փոխարինում<br>1 հատ | 2 000 | 8 000 | 8 000 |
| 45 | Բաշխիչ լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում<br>1 հատ | 10 000 | 30 000 | 30 000 |
| 46 | Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում 1 հատ | 1 000 | 25 000 | 25 000 |
| 47 | Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում<br>1 հատ | 5 000 | 60 000 | 60 000 |
| 48 | Թափանիվի առանցքակալի փոխարինում 1 հատ | 3 000 | 60 000 | 60 000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 49 | Շարժիչի գլխիկի կափույրի փոխարինում 1 հատ | 3 000 | 5 000 | 5 000 |
| 50 | Շարժիչի գլխիկի կափույրի միջադիրի փոխարինում 1 հատ | 2 000 | 2 000 | 2 000 |
| 51 | Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ | 5 000 | 10 000 | 10 000 |
| 52 | Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում 1 հատ | 3 000 | 3 000 | 3 000 |
| 53 | Ատամնանիվի փոխարինում 1 հատ | 5 000 | 25 000 | 25 000 |
| 54 | Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում 1 հատ | 2 000 | 5 000 | 5 000 |
| 55 | Սուխարիկի փոխարինում 1 հատ | - | - | - |
| 56 | Շարժիչի հանդարտիչի փոխարինում 1 հատ | 2 000 | 4 000 | 4 000 |
| 57 | Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում 1 հատ | 3 000 | 5 500 | 5 500 |
| 58 | Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում 1 հատ | 3 000 | 10 000 | 10 000 |
| 59 | Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում և տեղադրում միջադիրի փոխարինումով 1 հատ | 5 000 | 30 000 | 30 000 |
| 60 | Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում 1 հատ | 3 000 | 15 000 | 15 000 |
| 61 | Շարժիչի փոկի ձգիչի նորոգում 1 հատ | 2 000 | 15 000 | 15 000 |
| 62 | Շարժիչի գլխիկի գամասեղի փոխարինում 1 հատ | 5 000 | 10 000 | 10 000 |
| 63 | Շարժիչի գլխիկի գամասեղի փոխարինում՝ բնիկի նորոգումով 1 հատ | 15 000 | 25 000 | 25 000 |
| 64 | Ծնկաձև լիսեռի հեղույսի փոխարինում 1 հատ | 5 000 | 5 000 | 5 000 |
| 65 | Շարժիչի քիմիական լվացում 1 հատ | 1 000 | 5 000 | 5 000 |
| 66 | Բաշխիչ լիսեռի նորոգում՝ վռանի տեղադրումով 1 հատ | 5 000 | 5 000 | 5 000 |
| 67 | Ծնկաձև լիսեռի կարգավորող տափողակի տեղի նորոգում 1 հատ | 2 000 | 5 000 | 5 000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 68 | Կափյուրների հղկում<br>1 լրակ. | 2 000 | 5 000 | 5 000 |
| 69 | Բաշխիչ լիսեռի էլեկտրամագնիսական կափույրների փոխարինում 1 լրակ. | - | 30 000 | 20 000 |
| 70 | Հավասարակշռող լիսեռի փոխարինում<br>1 հատ | - | - | 150 000 |
| 71 | Շարժիչ տուրբո մղիչի փոխարինում<br>1 հատ | - | 150 000 | 150 000 |
| 72 | Վանոսների փոխարինում<br>1 լրակ. | - | 80 000 | 70 000 |
| 73 | Կափյուրի բնիկի նորոգում<br>1 հատ | 5 000 | 5 000 | 5 000 |
| 2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ | | | | |
| 74 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում<br>1 հատ | 2 000 | 3 000 | 3 000 |
| 75 | Համակարգչային ախտորոշում<br>1 հատ | 3 000 | 5 000 | 5 000 |
| 76 | Յուղի ռադիատորի փոխարինում<br>1 հատ | 8 000 | 20 000 | 20 000 |
| 77 | Յուղի ռադիատորի նորոգում<br>1 հատ | 8 000 | 8 000 | 8 000 |
| 78 | Շարժիչի ներածման կոլեկտորի հանում, փոխարինում կամ տեղադրում<br>1 հատ | 5 000 | 25 000 | 25 000 |
| 79 | Շարժիչի ներածման կոլեկտորի միջադիրի փոխարինում 1 հատ | 7 000 | 25 000 | 25 000 |
| 80 | Ավտոմատ փոխանցման տուփի ղեկավարման բլոկի հանում, փոխարինում կամ տեղադրում<br>1 հատ | 5 000 | 5 000 | 5 000 |
| 81 | Վառոցքի մոմի փոխարինում<br>1 հատ | 1 000 | 25 000 | 25 000 |
| 82 | Վառոցքի կոճի փոխարինում<br>1 հատ | 5 000 | 40 000 | 40 000 |
| 83 | Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում<br>1 հատ | 1 000 | 5 000 | 5 000 |
| 84 | Օդի զտիչի փոխարինում<br>1 հատ | 1 000 | 2 000 | 2 000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 85 | Օդի ծախսի կարգավորիչ հանում և տեղադրում կամ փոխարինում 1 հատ | 1 000 | 2 000 | 2 000 |
| 86 | Օդի ծախսի կարգավորիչ ռետինե խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում 1 հատ | 1 000 | 1 000 | 1 000 |
| 87 | Օդի զտիչի փողրակի հանում և տեղադրում 1 հատ | 1 000 | 1 000 | 1 000 |
| 88 | Կարբյուրատորի փոխարինում 1 հատ | 5 000 | 1 000 | 1 000 |
| 89 | Կարբյուրատորի վերանորոգում 1 հատ | 10 000 | - | - |
| 90 | Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում 1 լրակ. | 4 000 | 15 000 | 15 000 |
| 91 | Ինժեկտորի բոցամուղի մաքրում 1 հատ | 10 000 | 10 000 | 10 000 |
| 92 | Բոցամուղի կարգաբերում 1 հատ | 2 000 | 18 000 | 18 000 |
| 93 | Ինժեկտորի բոցամուղի խցուկի փոխարինում1 հատ | 3 000 | 18 000 | 18 000 |
| 94 | Բենզամղիչի փոխարինում 1 հատ | 4 000 | 20 000 | 20 000 |
| 95 | Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում 1 հատ | 3 000 | 13 000 | 13 000 |
| 96 | Վառելիքի բարձր ճնշման մղիչի փոխարինում1 հատ | 3 000 | 7 000 | 7 000 |
| 97 | Վառելիքի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում 1 հատ | 2 000 | 5 000 | 5 000 |
| 98 | Բռնկման կարգավորում 1 հատ | 2 000 | 2 000 | 2 000 |
| 99 | Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում 1 հատ | 4 000 | 5 000 | 5 000 |
| 100 | Ղեկավարման բլոկի վերանորոգում 1 հատ | 5 000 | 5 000 | 5 000 |
| 101 | Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում 1 հատ | 5 000 | 5 000 | 5 000 |
| 102 | Վառելիքի բաքի մաքրում 1 հատ | 3 000 | 14 000 | 14 000 |
| 103 | Օդի ծախսի տվիչի փոխարինում 1 հատ | 1 000 | 7 000 | 7 000 |
| 104 | Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում1 հատ | 5 000 | 7 000 | 7 000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 105 | Ջրի խողովակի փոխարինում 1 հատ | 3 000 | 40 000 | 40 000 |
| 106 | Բաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում 1 հատ | 10 000 | 20 000 | 20 000 |
| 107 | Բաքի բենզոմղիչի ցանցի մաքրում 1 հատ | 1 000 | 20 000 | 20 000 |
| 108 | Յուղի ճնշման տվիչի փոխարինում 1 հատ | 1 000 | 150 000 | 150 000 |
| 109 | Տվիչի փոխարինում 1 հատ | 1 000 | 1 000 | 1 000 |
| 110 | Արագարարի փոխարինում 1 հատ | 2 000 | 5 000 | 5 000 |
| 111 | Օդազտիչի իրանի փոխարինում 1 հատ | 1 000 | 1 000 | 1 000 |
| 112 | Էլեկտրական բենզոմղիչի կախոցի փոխարինում 1 հատ | 2 000 | 2 000 | 2 000 |
| 3. Հովացման և արտածման համակարգ | | | | |
| 113 | Հովհարի փոխարինում 1 հատ | 5 000 | 5 000 | 5 000 |
| 114 | Էլեկտրական հովհարի փոխարինում 1 հատ | 5 000 | 2 000 | 2 000 |
| 115 | Հովհարի թևանիվի փոխարինում 1 հատ | 3 000 | 8 000 | 8 000 |
| 116 | Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում 1 հատ | 3 000 | 2 000 | 2 000 |
| 117 | Արտածման կոլեկտորի հանում, տեղադրու կամ փոխարինում 1 հատ | 4 000 | 25 000 | 10 000 |
| 118 | Արտածման կոլեկտորի միջադիրի փոխարինում 1 հատ | 2 000 | 25 000 | 1 000 |
| 119 | Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում 1 հատ | 8 000 | 20 000 | 10 000 |
| 120 | Ռադիատորի նորոգում 1 հատ | 8 000 | 25 000 | 20 000 |
| 121 | Օդորակիչի կոմպրեսորի հանում, տեղադրում կամ փոխարինում 1 հատ | 10 000 | 20 000 | 20 000 |
| 122 | Օդորակիչի կոլոնակի հանում, տեղադրում կամ փոխարինում 1 հատ | 10 000 | 12 000 | 12 000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 123 | Օդորակիչի ռադիատորի փոխարինում<br>1 հատ | | 8 000 | 20 000 | 35 000 |
| 124 | Օդորակիչի ռադիատորի նորոգում<br>1 հատ | | 8 000 | 25 000 | 60 000 |
| 125 | Օդորակիչի կոմպրեսորի նորոգում<br>1 հատ | | 10 000 | 20 000 | 15 000 |
| 126 | Օդորակիչի զտիչի փոխարինում<br>1 հատ | | 2 000 | 5 000 | 2 000 |
| 127 | Օդորակիչի ֆրեոնի լիցքավորում<br>1 հատ | | 3 000 | 20 000 | 3 000 |
| 128 | Օդորակիչի հովարանի փոխարինում<br>1 հատ | | 3 000 | 3 000 | 3 000 |
| 129 | Օդորակիչի փոկի փոխարինում<br>1 հատ | | 5 000 | 8 000 | 8 000 |
| 130 | Օդորակիչի փողրակի փոխարինում<br>1 հատ | | 3 000 | 10 000 | 3 000 |
| 131 | Ընդարձակող բաքի փոխարինում<br>1 հատ | | 1 000 | 4 000 | 2 000 |
| 132 | Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում1 հատ | | 1 000 | 10 000 | 10 000 |
| 133 | Ռադիատորի ռետինե փողրակի փոխարինում1 հատ | | 2 000 | 3 000 | 8 000 |
| 134 | Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում<br>1 հատ | | 3 000 | 8 000 | 8 000 |
| 135 | Տաքացուցիչ ռադիատորի փոխարինում<br>1 հատ | | 3 000 | 20 000 | 15 000 |
